

Նախաբան

Սույն ժողովածուն հանդիսանում է Հայաստանի ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ), ինչպես նաև դրա հետ կապված մոդելների և ցուցանիշների վերաբերյալ երկրորդ, առավել ամբողջական, հրատարակությունը:

Ժողովածուն պատրաստվել է Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրության ծառայության (ՀՀ ԱՎԾ) տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների վիճակագրական տեղեկատվության, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներից, այլ կազմակերպություններից, պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից և բնակչությունից ստացված տվյալների հիման վրա՝ վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման և մշակման, ընտրանքային հետազոտությունների անցկացման, այլ ձևի վիճակագրական դիտարկումների, ինչպես նաև «չդիտարկվող տնտեսության» լրահաշվարկների ճանապարհով:

Ազգային հաշիվները, արտացոլելով տնտեսական ակտիվների հոսքերի հիման վրա հաշվարկված ապրանքների և ծառայությունների արտադրության ու օգտագործման գործընթացները, ընդհանրացնող պատկերացում են տալիս տնտեսության գործունեության վերաբերյալ՝ որոշակի ժամանակաշրջանում: Հայաստանի ազգային հաշիվների կառուցման համար հիմք է հանդիսանում Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ), Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Համաշխարհային բանկի, Եվրոպական համայնքների հանձնաժողովի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից որպես միջազգային չափորոշիչ ընդունված և 1993թ. հրապարակված մեթոդաբանությունը (ԱՀՀ-93)¹:

Ժողովածուի մեջ առաջին անգամ հրատարակվում են կառուցվածքային միավորների հիման վրա խմբավորված հատվածների հաշիվները: Տվյալները ներկայացված են ըստ հետևյալ հատվածների՝ ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ), ֆինանսական հիմնարկներ, պետական կառավարման մարմիններ, տնային տնտեսություններ:

Վիճակագրական ժողովածուի մեջ մանրամասն ներկայացված են Հայաստանի ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) ցուցանիշները 1990-2001թթ.՝ ներառյալ վերջին ճշգրտումները: Սույն ժողովածուի մեջ, տվյալների տարածման ընդհանուր համակարգի² պահանջներին համապատասխան, ներկայացված են ԱՀՀ հիմնական հասկացությունների և տեսակետների համակարգի մեթոդաբանական պարզաբանումները: ՀՀ ԱՎԾ կողմից կիրառվող համախառն ներքին արդյունքի հաշվարկի առավել մանրամասնեցված մեթոդաբանությունը նկարագրված է առաջին հրատարակության՝ «Հայաստանի ազգային հաշիվները 1990-1997թթ.» վիճակագրական ժողովածուի մեջ:

Սույն ժողովածուն պատրաստված է հանրության և բոլոր շահագրգիռ անձանց հիմնական մակրոցուցանիշների վերաբերյալ սպառիչ, թափանցիկ և մատչելի տվյալներ տրամադրելու նկատառումով:

Ժողովածուն նախատեսվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսավարող սուբյեկտների, միջազգային, գիտական, ձեռնարկատիրական և բանկային շրջանակների, տնտեսագիտական ԲՈՒՀ-երի ուսանողների, ասպիրանտների և պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, վիճակագրական տեղեկատվության այլ օգտագործողների համար, ում անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության տնտեսության վերաբերյալ մանրամասն և խորը տեղեկատվություն:

¹ Система национальных счетов 1993г., Брюссель/Люксембург, Нью-Йорк, Париж, Вашингтон, 1993г.

² Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների տարածման ընդհանուր համակարգ (SSD/GDDS), որին Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է 2001թ. մարտից:

Предисловие

Данный сборник является второй, наиболее полной публикацией по системе национальных счетов Армении, а также связанных с ней моделей и показателей.

Сборник подготовлен на основе статистических данных структурных подразделений Национальной статистической службы Республики Армения (НСС РА), а также данных получаемых органами государственной статистики от хозяйствующих субъектов, других организаций, органов государственного управления и местного самоуправления, населения путем сбора и обработки статистических отчетов, проведения выборочных обследований, других форм статистического наблюдения и досчетов по ненаблюдаемой экономике, полнотой которых не обеспечена информационная база.

Национальные счета, отражающие процессы производства и использования товаров и услуг на основе учета потоков экономических активов, дают обобщенное представление о функционировании экономики в определенный период. Основой для построения национальных счетов Армении является методология, принятая в качестве международного стандарта Организацией Объединенных Наций (ООН), Международным Валютным Фондом (МВФ), Мировым Банком, Организацией Экономического Сотрудничества и Развития и Коммисией Европейского Сообщества, опубликованная в 1993г. (СНС-93)¹.

В сборнике впервые публикуются секториальные счета по институциональным единицам. Данные приведены по секторам: нефинансовые предприятия (корпорации), финансовые учреждения, органы государственного управления, домашние хозяйства.

В статистическом сборнике подробно представлены показатели системы национальных счетов Армении за 1990-2001 годы, включающие последние поправки. В этом сборнике в соответствии с международными стандартами по общей системе распространения данных², приведены методологические пояснения основных концепций и понятий СНС. Более подробная, конкретно применяемая Национальной статистической службой РА, методология расчета ВВП описана в первом издании статистического сборника "Национальные счета Армении за 1990-1997 годы".

Данный сборник подготовлен для распространения исчерпывающих данных, прозрачности основных макроэкономических показателей, а также для доступа информации всем заинтересованным лицам и общественности.

Сборник предназначен для органов государственного и местного самоуправления, международных организаций, научных, предпринимательских и банковских кругов, профессорско-преподавательского состава, аспирантов и студентов экономических ВУЗов, других пользователей статистической информации, кому нужна подробная и глубокая информация об экономике Республики Армения.

¹ Система национальных счетов 1993г., Брюссель/Люксембург, Нью-Йорк, Париж, Вашингтон, 1993г.

² Общая система распространения данных (ОСРД/GDDS) Международного Валютного Фонда, к которой Республика Армения присоединилась с марта 2001 года.